

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ ՆՈՒԻՐԱՅԱԿՔ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ուրախութեամբ կը հաղորդենք, որ Առաջնորդանիստ Մայր Տաճարի կառուցման աշխատանքները հեզասահ կերպով կը շարունակուին եւ օրէ օր հոգեկան գոհացում պատճառող նոր տեսարաններ կը պարզուին բոլորիս աչքերուն առաջ:

Չորեքշաբթի, Յունուար 27ի երեկոյեան Առաջնորդարանի մէջ Սրբազան Դօր Նախագահութեամբ եւ Ատենապետութեամբ Տիար Անդրանիկ Զօրայեանի, Զանգանակիչ Յանձնախումբի Ընդհանուր ժողով մը գումարուեցաւ, որու ընթացքին հաստատուեցան հետեւեալ թուականները.-

ա- Մայր Տաճարին Նաւակատիքի Արարողութիւնը պիտի կատարուի Ապրիլ 30ին, 2010:

բ- Մայիս 2ին, 2010 Սուրբ Պատարագէն ետք Թեմական Պատգամաւորները եւ հաւատացեալները մեծ հանդիսութեամբ պիտի շրջագային Մայր տաճարին կառոյցէն ներս:

գ- Մայր Տաճարին Օծումը պիտի կատարուի Սեպտեմբեր 11ի երեկոյեան ժամը 5:00ին՝ Ն.Ա. Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Զայոց Կաթողիկոսի ձեռամբ եւ մասնակցութեամբ բարձրաստիճան հիւր հոգեւորականներու: